



ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պաշխարհոյ համար	
Տարեկան	12 ծր.
Վեցամսեայ	6 "
Ա. ասանկուսի համար	
Տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	
Տարեկան	3 ծր.
Վեցամսեայ	1.50 "

Սահմանափակ սուրբ աստվածներին համար 40 ասանկուսի է. իսկ վերջին երեսի համար 20 ասանկուսի է. երեսից ասանկուսի ան լավիտու համար 20 Օլիգոպոլիտայ:

Պաշխարհոյ համար ձեռքի (15 ՍԱՆԻԹԻՄ)

ՇԱՐԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ
 Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

B. P. Kalémcarian
 (Autriche)
 Mechitharistengasse W. 4
 Vienne

Redakция на вѣстникъ
 «Нарѣумъ»
 Варна
 Action journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

Արսասանկուսի համար ձեռքի (20 ՍԱՆԻԹԻՄ)

ԿՅՈՒՍԸ

Արարատ աշխարհի կատարուած իրողութեան մը հանդէպ կը գրանուի. Թրանսպալ վերջ ի վերջոյ անգլիական մեծագոյն տէրութեան կցուած է:

Կյում, ահա՛ բառ մը, որ մէկ վայրկեանի մէջ ալգի մը ճակատագիրը վեր ի վայր կը յեղաշրջէ:

Անոնք, որ օրը օրին հետեւեցան Անգլո-Պոնտական պատերազմին մանրամասնութեանց, կը վկայեն թէ՛ Պոնտերը, իբր քաջամարտիկ և գիւցազնական արիւն կրող ափ մը ժողովուրդ, առաջին անգամ Եւրոպական պատմութեանց շեքմ համակրանքին և խրախուսանքին արժանացան, և մինչև իսկ իրենց ծերունազարդ նախագահը, իր գիւցազնական դիմագրութեանց և մասնակի յաջողութեանցը համար շերտագին շնորհատուութիւններ ստացաւ մէկ քանի պետական անձնաւորութիւններէ:

Շատ հաւանական է ենթադրել որ՝ եթէ Պիլզմարք կենդանի եղած ըլլար, իր մարգարէութեանց յաջող ելք մը տալու համար գիւանագիտական սյլ և այլ դարձուածքներով կարող պիտի ըլլար անգլիական յառաջխաղացումը դադարեցնել, սակայն ոչ եւս է Պիլզմարք, ոչ եւս է այսուհետեւ Թրանսպալ:

Մարդ արդարեւ Լորտ Ռուպերթսի կցման սինիք յայտարարութիւնը կարգացած առեւ՛ կատարի զայրոյթի զգացումով մը կը տողորուի յանկարծ:

Շատեր կը չքմեղացնեն Անգլիան, առարկելով թէ՛ անիկա իր բարերար ազդեցութիւնը և քաղաքակրթիչ դերը հոն ալ պիտի տարած է, և Թրանսպալ պիտի սկսի յառաջագիմել հսկայաբայլ թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս: Իրա է, Անգլիա իր տիրած երկիրներուն մէջ անխժտելիօրէն բարերար ազդեցութիւն մը ունեցած է, իր տիրապետութիւնը մեծամեծ առաւելութիւններ ունի տնտեսական և վարչական տե-

սակէտներով ուրիշ տէրութիւններու տիրապետութեանց բազմամտք: Օրինակ, Հնդկաստան, եգիպտոս, և իր միւս բոլոր գաղութավայրերն իրենց այսօրուան բարգաւաճ վիճակն ուղղակի կը պարտին Անգլիոյ:

Հնդկաստան իր թոհ ու բոհ վիճակին դարման մը տանելու, և եգիպտոս թրքական անտանելի ղէժիմէն փրկուելու համար գրեկարաց ընդունեցին Ալպիոնի խաժակն զու՛ ընէրք. իսկ Պոնտերը միեւնոյն հանգամանքներուն տակ շէին գտնուեր բնաւ Եւրոպոյ կայէն իսկ փրթած ափ մը յաշնարած, հողագործ մարդիկ կուգան կը հաստատուին հարաւային Ափրիկէի լայնածաւալ կողերուն վրայ. կը շէնցնեն օր աւուր իրենց նորստաց հայրենիքը, կաճին, կը բարգաւաճին խաղաղ ու անդորր և օր մը, ի մեծ դժբաղդութիւն իրենց, անդիտակցօրէն կը կոխտան սակի երակներու վրայ:

Ա՛խ այս անիմեալ, փալիլուն դեղնորակ մտապը, քանի՛ քանի՛ անիրաւութիւններ և քստմնելի եղեռնագործութիւններ կը գործուին անոր տիրանալու համար:

Չէ՞մարդըն, իր խմբակով, Արգոսի ամենատուր աշերով նշմարեց այդ սակի երակները և իր պորտալական մասնաւոր հաշիւներէն գրգռած՝ դիւանագիտական նուրբ խաղերով մէջանել նետեց Թրանսպալի հարցը: Հում-Ռուլը իր ափրիկեան ապագայ ծրագիրներուն գործագրութեանը համար Թրանսպալը իտչընդոտ մը համարելով՝ մեծ խանդավառութեամբ ընդունեց միակնոցաւորին առաջարկը և պատերազմը հռչակուեցաւ:

Անհամեմատ ճակատամարտ մըն էր որ կսկսէր. պարզապէս գեռաբուսիկ մանուկ մը՝ ամենի փրկիչը բերախ առիժի մը դէմ յանդիման:

Եւրոպական անգութ տէրութիւնները, դիւանագիտական նեղ հաշիւներէ դրդուած, օգտութեան ձեռք չի կարկառեցին բնաւ, և առանց խցճի խայթ մը իսկ ունենալու թող տունն օր

համայնակու Ալպիոնը իր ճանկելուն մէջ պրկէ խեղճ Օրանժը և խեղճ Թրանսպալը, այդ նորածագ երկու քոյր հանրապետութիւնները:

Այս կցումը քաղաքակրթ համարուած Եւրոպայի ճակատին վրայ խոշոր արատ մը կը փակցընէ. քստմնորդ գարուն սկզբնաւորութեան մէջ՝ Անգլիական սինիք դիւանագիտութիւնն ու բիրտ ուժը յաղթանակեցին, սակայն քաղաքակրթութեան պատմութեան մէջ ապագային Ալպիոն բնաւ երբէք ինքնարդարացումի ամենաթեթեւ պատճառ մը չի պիտի կրնայ գտնել և պիտի ենթարկուի յաւիտեանականապէս սկարը կեղծիքած ըլլալու ամօթալի դատապարտութեանը: Ամօթ իրեն, Ամօթ Եւրոպայի:

ԱՒՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ. 2 Սեպտեմբեր

Յորեկանին աղմուկները դադարեցան, սիրտերը քիչ մը հանդարտեցան, և կը սկսինք քիչ մը աւելի ազատ շունչ քաշել: Եւրոպական պետութեանց պատուիրակներն իրենց տեղերը կը վերադառնան հետզհետէ հետերին տանելով Սուլթանական շքանշաններու ազամանդակուռ բոլոր աստիճանները, սակայն այս յարեւանի առթիւ գերմանական գեսպանը Պ. Մարչալ ընդունեց այնպիսի ազամանդակուռ պատուանշան մը որ մինչև հիմա տրուած չէր ոչ մէկ եւրոպացիի, և որը յայտնի ապացոյց է թէ թուրք և գերման մտերմութիւնը որ աստիճանի հասած է:

Ուղիւր խօսելով թէ Երլուրդի օրջին և թէ թուրք բոլոր բարձր շրջանակներու մէջ կատարեալ յուսախաբութիւն կը տիրէ: Սուլթանը գոհ չէր մնացած ընդհանուր խօսելով իրեն եղած շնորհաւորական արտայայտութեանէ: Բացի գերմանացիներու սրտա-

բուխ համակրութենէն, բոլոր միւս տէրութիւններունը պարզ քաղաքավարական շրջանէն անդին չէ անցեր: Մանաւանդ շատ աչքի զարկեր և Սուլթանին սրտին դպեր է Անգլիոյ պաղ վարմունքը՝ ճնորհաշուք թագուհւոյն ներկայացուցիչը, Միշերկրականի Անգլիական նաւաբաժնին հրամանատարը, արգէն սովորութիւն ունէր տարին անգամ մը այցելել փատիշահներու քաղաքը, Սուլթանը կը սպասէ եղբոր որ Լնտոնէն մասնաւոր պատուիրակութիւն մը կուգայ:

Ու իր տօնը տիեզերական ընելու համար այնքան դրամ վատնեց, թերթեր կաշառեց...

Չէ՛, փատիշահ չէ՛, ախորժակդ պահէ քեզի. արժանավայել յորեկան մը պիտի տօնենք երբ ժամանակը գայ:

Արարատ աշխարհի յայտնի իրողութիւն մըն է որ Թուրքիոյ մէջ Անգլիական ազդեցութիւնն ու քաղաքակրթութիւնը հետզհետէ թուլնալու անհետանալու վրայ է, և հետզհետէ անոր տեղ կը բռնէ գերման ազդեցութիւնը: Ասոր թէ Պոլսոյ և թէ Փոքր-Ասիոյ մէջ շահագործութեան ամէն գործ ու ճիւղ գերմաններու ձեռք կանցնի:

Ռուսիա որ միշտ իր Թուրքիոյ մէջ ունեցած շահերուն, ձգտումներուն և յառաջխաղացութիւններուն գլխաւոր արգելք, խոչընդոտն ունէր Անգլիան և անոր հետ կը բաղխէր շարունակ, գեռ կը շարունակէ իր հակաանգլիական քաղաքակրթութիւնը, գեռ կը ճգնի այդ ազդեցութեան ուժը կտարելու, մինչգեռ անդին գերմանիան բոլորովին ազատ մնացած և թերեւս Անգլիոյ թոյլտուութեամբը իր գործը առաջ կը տանի և լուիկ մնչիկ Թուրքիոյ մէջ կը տեղաւորուի: Սակայն պիտի չուշանայ ան օրը, երբ Ռուս-Գերմանական շահերը իրարու պիտի ընդհարին, և Ռուսիա իր դէմը պիտի գտնէ չէ թէ Անգլիան, այլ Գերման մրցակից

մը աւելի ուժով, աւելի ճարպիկ:

Մեզի համար սակարեւոր է որ երբեք թուրքիան չի մտնէ Ռուսական ազդեցութեան տակ. այն օրը որ հիւսիսի Չարբը իրենց արջի թաթերուն մէջ պրկեն Փոքր-Ասիան ալ մնաս բարով մեզի:

Նախորդ նամակով մը գրած էի որ պուլկարներն ալ սկսած են հայաժողով Պոլսոյ մէջ: Թուրք կառավարութիւնը անարշիտի անունին տակ կը փնտռէր իսկապէս Մակեդոնիացի յեղափոխականներ:

Յոյները ուրախ էին, չէ՞ մի որ հայաժողով հայէն և պուլկարէն յետոյ իրենց պիտի մնար Պոլսոյ ամբողջ գործունէութիւնը... դառն ծիծաղ, ասօր իրենք ալ սկսած են հայաժողով:

Քանի մը օր առաջ կը ճաշէի Ղալաթի մեծկակ ճաշարան մը, յանկարծ թուրք ոստիկաններ եկան և երկու յոյներ առնելով տարին Վոյվօտա:

Ասոնցմէ զատ ուրիշ ձերբակալութիւններ ալ եղան. յոյները կամբաստանեն իբրև անգամներ «էթնիք-էթէրիա»... «Խ ըլլայ»:

Այս յոյն ձերբակալուածներուն մէջ կան յունական հպատակներ, և որովհետեւ դեսպանը բացակայ է, հելլեն գործակատարը Մ. Կրիփարիոս գիմում ըրած է թուրք կառավարութեան մօտ, որպէս զի արձակուին այդ ձերբակալուածները և հայաժողովը դադարի յոյներուն դէմ:

Առանց մեծ բան մը սպասելու յոյն փախչողներէ, պէտք է աչքէ չի փախցնենք սակայն թուրքիոյ ներսերը նշմարուած

թուրքերու դժգոհ արտայայտութիւնը:

Ընթերցող, գիտես արդէն Վանի Անգլիական հիւպատոսին դէպքը: Մտիկ ըրէ, կառավարութիւնը ձեռք անցնելու համար գուցուած իրեղէնները և յանցաւորները, ստիպուեցաւ կռիւ մղել քրեւորներն հետ, ժամերով պատերազմել են և ինչպէս կիմանամ սոցյգ աղբիւրէ բաւական թուրք զինուորներ շանսատակ եղած են: Աս մէկ:

Հայֆոյի մէջ թուրքերը յարձակած են այն գերմաններուն վրայ, որ անոնց հողերուն արագած էին. կառավարութիւնը ստիպուած է բռնի սթի գիմել որպէս զի զսպէ թուրքերը: Աս երկու...:

Եւ մենք կը սպասենք որ բոլոր հայաժողովը այս ազգերը, հայ, թուրք, պուլկար, յոյն, քրիտ օր մը ձեռք ձեռքի պիտի տան և վերջ դնեն այնպիսի թագաւորութեան մը որ պատմութեան մէջ եղական պիտի մնայ իր ոճրագործութիւններովը և արևմտաւորութեամբովը:

Ընթերցող, կը սպասես անշուշտ որ քիչ մըն է ազգային կեանքէն լուրեր տամ. ա՛խ ինչ ըսեմ, մեր ազգային կեանքը ամուլ է Արաբական անապատ մըն է աւազուտ, ուր փուշ և տատակ միայն կը բուսնին, և մեր վաշտերն են մեր աղաները, մեր ստորակները և մեր վարիչներուն ստորնութիւնները:

Պատրիարքարանի մէջ Օրման փաշան զուլուր կախած է, իր հաստ գէմքի գիծերը աւելի կերուած են, իր սիրեցեալ վեհապետը ոչ մէկ բացառիկ շնորհ ըրաւ իրեն իր յորեխանին առթիւ, ինք որ այնքան հաւատարիմ ծառայած էր անոր, ինչո՞ւ

խոշոր նուէր մը չեկաւ իր քսակը ուռեցնելու, ինչո՞ւ ազամանդակուռ նշան մը իր խողի կուրծքին վրայ չեկաւ վաւիլիլ...:

Ուրախ է սակայն Տիգրան էֆէնտին, շատ ուրախ է, ինք «չալից արևուկը», և կը սպասէ որ, Սուլթանական երկրորդ յոբելանի մը փաշայութեան տիտղոսը ընդունի, չէ՞ մի որ հայրը արդէն պարսիկ կուռավարութենէն խան տիտղոսը առած էր, ի՞նչ աշուր կը վայլէ. Խան-Չատէ Տիգրան փաշա:

Սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք ամէնքդ ալ մուրասնուգ կը հասնիք:

Վերջերս նորէն Խառն ժողով գումարուեցու, բացակայ են կրօնական ժողովի բոլոր անդամները բացի Այլաղիան Յէվսէֆեպիսկոպոսէ որ այսօր պատրիարքին զլխաւոր խորհրդատուն է:

Խառն ժողովի աշխարհական անդամները, նկատելով որ կրօնականները ձեռնպահ կը մնան կրիկիոյ կաթողիկոսական ցուցակի մասին, և իրենց հին որոշումին մէջ հաստատ են, իրենք ալ կորոշեն ալ աւելի առաջ չերթալ և պատրիարքին կը յայտարարեն որ ինք գործադրէ ինչ որ պէտք է:

Հիմա Օրման փաշար նեղ վիճակի մէջ է, երկու սուրի մէջ, կը սուի թէ նորէն պիտի հիւանդանայ, ուրիշներ ալ կը սեն թէ կառավարութիւնը իր կողմը սիրաշահելու համար վերջին ստորնութեան ալ պիտի գիմէ...:

Անհամբեր կը սպասենք իր առնելիք քայլին: Բայց հայ ազգը թոյլ չի պիտի սայ անշուշտ որ ազգային դարեւոր կրօնական առանցնաշնորհութիւնն ալ ծախուին բոլորովին:

Քանի մը օրէ ի վեր հոս լուր կը պտտաի թէ յեղափոխականներու խումբ մը ձերբակալուած է ու կարեւոր թուրքեր և առարկաներ ձեռք անցուցած: Այս ձերբակալութեանց մէջ ստիկանութիւնը դեր մը չէ կատարած: Գարձեալ հայ դասաճանի քարշի մատը կայ գործին մէջ: Յաջորդ թղթակցութիւնովս կը ջանամ բոլոր կարեւոր մանրամասնութիւնները հարողել «Շարժում»-ի ընթերցողներուն:

ԲԱԺ
ԹԱՎՐԻՉ . 17 ՕԿՏՈՍՏՈՍ
(Շար. Ասխ. թիւն և Վերջ)

Փողերը արդէն կուլ էր գնացել, և հասարակութիւնն էլ այդ պարզապէս նկատեց, սկսեց բարոյապէս ճնշել, բայց ի՞նչ կարող է ազդել այն մարգուն, որ փոքրի շատէ զուրկ է ինքնասիրութիւնից, ու՛մ... մէկին, որ թոյլ է տալիս իրեն կոպէկներով հաւաքած փողը ծառայեցնել իր կրթութիւն: Այդպիսիները միշտ իրենց նմաններ կը գտնեն, ինչպէս վերև յիշեցի:

Այսպիսով ուղեցին իրենց բարեկամական շրջանը մի տեսակ լայնացնել, իբրև ինքն էլ մի նոր մարդ. հեշտութեամբ կարողացաւ գտնել մի նոր հարսնացու, շնորհիւ մի քանի անփորձ երիտասարդներին, որոնց հետ ծանօթացել էր իւր յետադէմ մտքերը իրագործելու: Ծանօթանում է մէկ նորաւարտ օրիորդի հետ, որը երկու ամիսէ ի վեր աւարտել է կրթական զարգացում, և ոգեւորուած նոր մտքերով՝ առանց մտածելու տալիս է իւր համաձայնութիւնը:

Այդ ձեռնարկը չը պարտնի ձեռնարկած միջոցներին. որպէս զի որքան կարելի է ծածուկ մնայ, մանաւանդ իրեն ճանաչողներինց, չի յաջողում բնու: Մի քանի օր տեսում է այդ նոր գրութիւնը և դուցէ յաջողուեր. եթէ մի քանի պարոններին միջնորդութիւնը չի լինէր: Այդ պարոնները իրենց բարոյական պարտ համարելով յայտնում են օրիորդին խաչագողի ով լինելը առանց աշխատելու օրիորդին համոզել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (5)

ԽԱՒԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Բ.

Վարդգէս Գեղամեան որ հազիւ 24 տարեկան կար, միջինէն քիչ մը բարձր հասակով, խարտեալ մազերով, մեծ ու խաժ աչքերով, չէկ պեխերով ու սրածայր մօրուքով գեղադէմ երիտասարդ մըն էր:

Պոլսեցի էր. իր հայրը Գեղամեան Մանուկ աղա, պատանեկութեան ատեն եկած էր Պոլիս, և ոսկերչութեան շուկան մտած էր: Մանուկ իր ուղիղ բնատրուածութեամբ և հաստատակամ աշխատութեամբ քիչ ժամակէն արհեստին տիրացած և իրեն համեմատան խանութ մը բանալով պատուաւոր դիրք մը գրաւած էր իր արհեստակիցներուն մէջ:

25 տարեկան հասակին մէջ Կէտիկ-

Փաշա իր հին վարպետին մէկ աղազականին աղջկանը նազեխելի հետ ամուսնանալով այդ թաղին մէջ հաստատուած էր:

Մանուկ աղայի անդրանիկն էր արդգէս: Մանուկ աղա թէեւ իր գաւառին մէջ տարրական կրթութիւն մը հազիւ ստացած էր, բայց Պոլիս գալով յարատեւ ընթերցանութիւնով մը բաւական զարգացած էր և լուսամիտ գաղափարներու տէր:

Կէտիկ-Փաշայի մէջ հետզհետէ վարժարաններուն Հոգաբարձու, Թաղական եղած և յետոյ Պատրիարքարանի ժողովներուն ալ մասնակցած էր:

Ինչպէս իր գործերուն, ի մասնապէս հանրային գործերուն մէջ ալ առաջնորդուած իր ուղիղ բանավարութեանէն շատ անգամ կուտի կը բռնուէր իր պաշտօնակից աղաներուն հետը, որոնք ամէն բանի մէջ կառավարողութիւն կողմակի հաշիւներէ և նկատումներէ:

Մանուկ աղա իր կրիւններուն մէջ ալ միշտ աղնու կը գտնուէր, այնպէս որ հակառակ իր համեստ դիրքին, իր հակառակորդներն անգամ

կը յարգէին զինքը, և իր կարծիքը, խօսքը մեծ կշիռ ունէր:

Մանուկ աղայի զլխաւոր հոգն էր սակայն իր գաւառիներուն դաստիարակութիւնը, և որուն համար ոչ մէկ ջանք չէր խնայեր, ոչ մէկ զուհողութեան ստիպել չէր ընկրկել:

Վարդգէս շուտով աւարտեց թաղին նախակրթարանը և անցաւ կեդրոնական: Վարդգէս ժառանգած էր հօրմէն ուղղամտութեան և աշխատասիրութեան ոգին, իսկ մօրմէն վերջին ծայր բարի, վստահ և զգայուն բնատրութիւն մը:

Իր գասերուն մէջ միշտ յառաջադէմ, գրեթէ ամէն քննութիւններու մէջ առաջինը կը հանդիսանար, իր յաջողութիւնները ոչ զինքը կը շաղկունէին ոչ կը շփացնէին և ոչ ալ ընկերներուն նախանձն ու մարտնչը իր դէմ կը զրգոյէին: Այնպիսի բարի էր դէպի իրմէն տկարներն ու թոյլերը, և այնչափ ներողամիտ դէպի իր հակառակորդները որ ամէնքն ալ գաստու թէ աշակերտ կը յարգէին զինքը ու կը սիրէին:

Գլորացի սեղաններուն վրայ, վեր-

ջին տարիները մասնաւանդ. իր ընկերներուն հետ ծրագիր կը մշակէր ապագայ գործունէութեան համար:

Իր գասերներուն մէջ մասը վերջին տարւոյն մէջ արդէն պատրաստութիւն կը տեսնէին Եւրոպա երթալով բարձրագոյն կրթութիւն ստանալու: Վարդգէս չէ թէ միտքէն այդպիսի բան մը չէր անցնէր, ալ նոյնիսկ շատ անգամ անոնց հետ երկար վէճեր կուտնէր:

— Անհրաժեշտ է, կըսէին այս վերջինները, Եւրոպա երթալ, մեր մէջ շատ քիչ են համալսարանականներ, մասնագէտներ: Որպէս զի աւելի հաստատ հիմքերու վրայ դրուի մեր գաստիարակութեան գործը, և աւելի ապահով ու փութով կատարուի մեր վերածնութիւնը, պէտք է բարձրագոյն կրթութիւնով օժտուած մարդիկ ունենանք:

— Աղէ՛կ կը պատասխանէր Վարդգէս, շատ գնահատելի է ձեր այդ գաղափարը, մեր ազգին ներկայ վիճակին մէջ այնքան պէտք ունինք գործաւորներու, որ անխղճութիւն է խմբովին թողուլ հեռանալ, և 4-5

Մի անսպասելի քաջութեամբ առանց տատանուելու, օրիօրյոր մերժում է, պատճառաբանելով որ ինքը խարուած է:

Դարձեալ ելք ունէր պարոնը իւր այդ վերջին դիտաւորութիւնը իրագործելու, այն է բռնի կերպով: Փաստաբանը չէր կարող իւր դերը չը կատարել, նա արդէն իւր յատուկ փաստաբանութեամբ աշխատում էր, ամէն ճիգ թափում էր, եւ ինչպէս չը թափէր, քանի որ դրա համար արգէն ստացել էր իւր ստանալիքը:

Դարձեալ հանդիպում են դիմադրութեան: Այս անգամ թուրքին պաշտպան էր, ինչպէս միշտ եւ այս դէպքումն էլ յեղափոխականը՝ որի ձեռքից չէր կարող արծիւ, ո՛ր տեղ որ լինէր, ո՛ր որ գնար: Նոյն դիմադրութեան գիշերը՝ շնորհիւ յեղափոխականների ճնշման ախպուսում են հեռանալ միասին քաղաքից, ոտքից մինչ դուրս թրջուած ցեխի մէջ:

Անցնում է մի քանի շաբաթ վերադառնում է փաստաբանը, իւր տիրոջ թողնելով: Այս անգամ սկսուած է թորձեալ նոյն հարցով զբաղուել, բայց ողորմելի գուցէ լաւ չէր ուսումնասիրել իր օրինագիրքը, գործ չէր ունեցել յեղափոխականի հետ: Ուղղակի աջ ու ձախ դաշտախաղով զինեցնելով սկսել էր Դաշակցութեան հասցէին զբարտաւթիւններ շարժել: Ետ ապա չէր գործը չէր տարել, շնորհիւ յեղափոխականների, բայց այնքան չէր մտածել ողորմելին, նրանց որոնց մասին խօսում է հասարակութիւնը, լաւ է ճանաչում իրենց ամէն կողմերով եւ այսօր ինքը մի թրջուած հաւր պէս դարձել է մի ծիծաղ քաղաքում:

Ինչպէս յիշեցի այստեղ ամուսնական խնդիրը աչքի թող է անուում, այդ տեսակետից երկու մասի կարելի է բաժանել: Մէկ մասը որ կազմում է հարուստ դասակարգը առանց օրիորդի համաձայնութիւնը հարցնելու՝ բաւական է հայրը կամ հօրեղբայրը, կամ մի որ եւ է մտիկ բարեկամը համաձայնի, արդէն խնդիրը վերջացած է, ինչ տեսակ փեսացու էլ լինի, լինի նա 35-40-45, տարեկան չնայած որ աղջիկը դեռ դպրոցումն է 13-14 տարեկան է: Աղջիկը երրորդական սեղն է բռնում:

Ինչպէս վերջերս տեղի ունեցան մի քանի դէպքեր, եւ որ գլխաւորն

է անողներից մէկը եղաւ ուսուցիչ, մանկավարժ որ անցեալ տարի լըստաւանական ընկ. ժողովում այդ հարցի մասին մի դասախօսութիւն կարգաց, անուանելով այդ վարմունքը «բարբարոսութիւն», այսօր ինքը իւր ձեռքով անում է, էլ ինչ ենք պահանջում ժողովրդից, քանի որ ուսուցիչը թաղուած է այդ ախտով:

Երկրորդ աղքատ դասը՝ մի փոքր աւելի ունեցող, բոլորովին ուրիշ է: Այն էլ ստանց նշանելու թէ ո՞վ է, միայն թէ աղջիկը սազանայ իբրեւ մի փոսած ապրանք համաձայնում են, ինչպէս եղաւ վերջերս մի դէպք: Աղջիկը օգտուելով առաջին դէպքում խաչագողի վարմունքից, մերժում է բացարձակ մի պարոնի, որ նոյնպէս նոյն շարքին է պատկանում, այդ պարոնը օգտուելով ծնողների աղքատութիւնից առաջարկութիւն է անում: Ինչպէս մերժուելուց յետոյ երեսաց, պարոնը ուզում էր վերցնել օրիորդին իւր երեւակայած տղի համար որ այս տեղ չէր, Այսպէսով եթէ շարունակելու լինինք կարող է հարիւրաւոր երեսներ բռնել նոյն անման դէպքեր:

Երկրորդ մերժումն է որ տեղի է ունենում թաղիկում բացարձակ: Դա արդէն մի քայլ է հարեմական դրութիւնից ազատուելու, ուրիշ ոչ մի ելք չունէ՛ք, չը պէտք է վատուելի, չը պէտք է ազգուի բամբասանքներից, դուք կուենեք ձեր հետեւողները, ձեր հետն է ներկայ յառաջդիմութեան ուժ տուող տարրը: Դուք բողոքեցէք, այդ բողոքող ձայնը կուենեայ իւր ազդեցութիւնը նոր սերնդի վրայ:

Եւ այդ կայծերը բորբոքուելով կոչնչացնեն մի օր այս բոլոր խոչընդոսները, մեզ տարով մի սերունդ որ պատրաստ է ներկայ պահանջներին բաւականութիւն տալ:

ՆՈՐԱԹ

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ Թ. Կ ՊՅՈՆՁՈՒՄ ԵՆՆԻ

Ա. Տարի 60 սանթիմ, Բ. Տարի 1 Ֆրանք, Գ. Տարի 1 Ֆրանք:

Դուն է 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ:

Վճարումներ կանխիկ:

Յանձնարարութեանց համար գիմել յօրինողին սա հասցեով

Թ. Կ. ՊՅՈՆՁՈՒՄ ԵՆՆԻ (Պուլկարիա) Վառնա

տարի ազգը զրկել մեր ուժերէն:

— Ինչո՞ւ անխղճութիւն ըլլայ, կը պատասխանեն անոնք, չէ՞ մի որ ամէնքս ալ չենք յաջողիր, մէկ մասը հոս կը մնայ, եւ երկրորդ ինչո՞ւ կը մոռնաք ու չբայ անուշը:

— Չեմ ըսեր թէ կը խարէք, կը պատասխանէր վարդապետը զրուիք շարժելով, բայց չարաչար կը խարուիք: Տեսէ՛ք մեր այս վարժարանը քանի մը տարի է ի վեր աղջիկն կընծայէ ընթացաւարտներ, ո՛ւր են անոնք ինչ գործի վրայ են, եւ ազգը իր անկալութեան թիւերուն մէջ որքան պատկուած է: Բոլոր կարողները եւ քաղաքացիները եւ քանի մըն ալ չի յաջողուածներ, որոնց ալ սակայն խելքը միտքը հոն երթալու վրայ է, այնպէս որ ոչ մէկ բանի կը փարին սիրով եւ եռանդով, թողունք ասոնք, գացողները ինչ ճիւղերու կը հետեւին, մէկը տօքթօր պիտի ըլլայ, մէկը փաստաբան, մէկ ուրիշը ճարտարագէտ-երկրաչափ, քանի՞ ընթացաւարտ ունինք որ եւրոպա գալսած ըլլան մանկավարժութեան, գրականութեան եւ

կամ ընկերային գիտութեանց հետեւելու:

— Բայց մենք մեր նախորդներուն ճամբան չի պիտի բռնենք:

— Կը հաւատամ, բայց միջոց չունիք ձեր դրամովը ճամբորդելու, եւ հետեւաբար այս կամ այն աղային, վաճառականին ոտքը պիտի իյնաք որ ձեզի պաշտպան ըլլայ ամսական ուղարկէ: Կրնա՞ք ամբողջ Պոլսոյ մէջ մէկը գրտնել որ ուսուցչութեան եւ կամ հրապարկագրութեան պատրաստող մէկուն համար հինգ վարայ վճարել յանձն առնէ, Չէ՛, անոնք գրական մտորդիկ են, եւ դաստիարակութեան կամ ազգային վերածնութեան գործը կը չափեն իրենց արըծնով կամ խանութարով, եւ գուք յաջողելու համար պիտի փոխէք ձեր մտադրութիւնը եւ պիտի հետեւիք գրական, հաց բերող արհեստի մը:

— Մենք եթէ արհեստի ալ հետեւինք անուշտ բոլորովին նիւթին չի պիտի կպչինք, չի պիտի մոռնանք մեր իտէալը:

— Ուզէք չուզէք պիտի մոռնաք, արդէն տեսէք վերադարձող մեր

ԱՆԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շար. Անխորդ յիշեմ)

Անցեալ թուով ցցուցինք թէ երեսփոխանական դրութիւնը կընդունի որ փոքրամասնութիւնները զոհուին մեծամասնութեանց: Արդ իսկապէս անբաժնիչ է որ միշտ փոքրամասնութիւնները մեծամասնութեանց ձեռքով խեղդուին: Միջէ ամենուն յայտնի չէ՞ որ, միշտ փոքրամասնութեանց, անհատներու քիչ կամ շատ սեղմ խումբերու մէջ է որ կը ծնի ամէն յառաջդիմութիւն: Երեսփոխանական դրութիւնը իր սկզբունքներով իսկ, ազատ անկախանող յառաջդիմութեան դէմ արգիւք մը չէ՞, ինչո՞ւ հասարակական ասպարէզ մեռնալու դարձնենք մեծամասնութեան մը (միշտ խարուսիկ ինչպէս քիչ մը յետոյ պիտի տեսնենք), եւ դասապարտենք յառաջդիմութեան սերմերը կրող փոքրամասնութիւնները կասաղի ու անհաւասար կոտորմը:

Այնքան ալ փոխի չի պիտի ընէինք եթէ երեսփոխանական դրութիւնը գտնէ ճշմարտապէս եւ հաստատօրէն ընկերութեան մը անդամներուն մեծամասնութեան ճշմարտ կամար արտայայտէր: Մինչդեռ այսպէս չէ գործնականին մէջ: Ընկերութիւնները կը կազմուին, իրարմէ շատ տարբեր ձգտումներ ունեցող հասարակներէ, որոնց ամէն մէկը քիչ կամ շատ սահմանափակ փոքրամասնութիւն մը կը կազմէ: Ուստի խրնդրի մը մասին քուէ տալու համար, այս հասարակները ստիպուած են իրարու հիտ միաբանիլ, իրենց ծրագրերը փոխել, հիմնական զիջումնի ընել, նոյնիսկ իրենց սկզբունքներուն գաւառներ, որպէս զի իրենց գործող հակառակորդները տապալել կարողանան:

Ասկից յատուկ կուզու այն անվերջ կրկնաքուէարկութիւնները (Balltage) որոնք արդի ընկերութիւնը կը բնորոշեն, ահնիբեւ ապացոյց համոզուելու համար թէ իսկական մեծամասնութիւնները—բնական մեծամասնութիւն ըսուածը—գոյութիւն չունին իրականին մէջ: Ընտրողներուն խոչոր մէկ մասը զգուած կուսակցութիւններուն այս ընկերչա-

կութիւններէն (Coteri) եւ սկզբունքի առուտուրէն, որուն հետեւանքով երբեմն ընկերվարական մը կը քուէարկէ յետադիմական մը հետ, պարզապէս ետ կը կենայ քուէարկելէ: Ու ձեռնպահ միացողներու այս հոսանքը այն աստիճան կընդհանրանայ հետզհետէ, որ կարգ մը երկիրներու մէջ նոյնիսկ քուէարկութիւնը պարտաւորիչ դարձնել կը խորհուի:

Այնպէս ուրեմն հասարակութեան կարեւոր մէկ մասը երբեմն չի մասնակցիր նոյնիսկ քուէարկութեան: Արդ՝ քուէարկողներու արհեստական մեծամասնութիւնը ինչ կընէ, Կը վճռէ՞ արդեօք հասարակական եւ քաղաքական խնդիրները: Ոչ, երբէք: Անկա երեսփոխան մը կընտրէ, որ պիտի վիճարանի տարբեր ընտրողական շրջանակներու ներկայացուցիչներուն հետ, ժողովրդին բոլոր կենսական հարցերուն վրայ, եւ որ օրէնքներ պիտի հաստատէ ամէն խնդրի մասին՝ նոյնիսկ անոնց որոնց վրայ գաղափար անգամ չունի տարրվարներութեան եւ երկրագործութեան վրայ առանց բնագէտ կամ երկրագործ ըլլալու, ճամբաներու եւ հաղորդակցութեանց մասին, առանց երկրաչափ ըլլալու, հասարակաց կրթութեան վրայ, առանց մանկավարժ մը ըլլալու, հանրային առողջութեան վրայ, առանց բառ յը հասկնալու բժշկութիւնէն, եւ այլն:

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Ուրախութեամբ կը լսենք թէ Վիեննայի Միլիթարեան միաբանութեան երկու հասուածներուն միջեւ ծագած անհամաձայնութիւնը մօտ ատենէն վերջնական կարգադրութիւն մը պիտի գտնէ: Ուրախ ենք մանաւանդ ծանուցանելու թէ՛ Լեբաւայր Այսթրեան արքեպիսկոպոս, կուսակցութիւններու միջոյն իր վրայ բանեցուցած ազդեցութիւնը թօթափելով՝ հակեր է հմուտ միաբաններու կողմը, եւ հասարակական է որ յառաջիկային

վարդապետ սակայն իր ծրագրին մէջ մնաց միշտ, եւ դպրոցը աւարտելէն յետոյ յայտնեց իր հօրը թէ ինք ուսուցիչ պիտի ըլլայ:

Մանուկ ազա բաւական յանկարծակիի եկաւ, ինք ալ իր կողմէն տղուն համար ծրագիր մը պատրաստած էր, բաւական գրամ ունէր եւ կը խորհէր ուրիշ տեղէ մը փոխառութիւն ընելով տղան Բարիկ զրկել բժիշկ շինելու: Առաջ կասկածեցաւ որ վարդապետ իր վրայ բեռ չըլլալու համար այդպէս կը խորհի, բայց երբ տեսաւ որ անկեղծութեամբ կը խօսի, եւ փափաքն է ուսուցիչ ըլլալ, իբր բարի հայր եւ զարգացած մարդ թոյլ տուաւ տղուն որ գործէ իր ուզածին պէս:

Վարդապետ անմիջապէս պաշտօն մը գտաւ դպրոցի մը մէջ եւ սկսաւ միւս կողմէն աշխատակցել օրաթերթի մը մէջ:

ՎԱՀԱՆ, ՄԱՆՈՒԷԼԱՆ

(Շարունակելի)

տեղի ունենալիք միաբանական ընդհանուր ժողովին մէջ իր ձայնը բարձրացուցած է ինպատակաւ նոյն : Միաբանութեան տարէց անդամներուն փափաքն է եղբոր դադարեցնել «Հանդէս Ամսօրեան», առարկելով որ հասոյթը չի բաւեր ծախքը կոչելու : Մանօթ համաձայնութեան կարգադրութիւնը այդ փափաքին իրագործումը պիտի արգիլէ և Հանդէսը պիտի կրնայ ըստ առաջնոյն հրատարակուիլ, աջակցութեամբ ուն վարդապետներուն, որոնք անհամաձայնութեան պատճառաւ ձեռք քաշած էին անկէ :

— Մամուրեանի յորեւեանին առթիւ Քիւրքեան Միհրան հազար կտորի չափ գիրք նուիրել է Ղալաթիոյ ազգային մատենադարանին : Այդ գիրքերն ալ միւսներուն նման յաւիտենականացէս փոշիի տակ մնալու պիտի դատապարտուի արդեօք :

— Ոստիկանական նախարարութիւնը Պատրիարքարան ազգարար գիրք մը զրկած է պատուիրելով որ անչափահաս ու անփորձ տղոց ձեռքը զանձանակներ չի տրուին, զանազան անպատեհութեանց տեղի չի տալու համար : Նախարարական պաշտօնագիրը մասնաւորապէս կը յիշէ Պալաթի գանձանակները պտտցնողները :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոյսէն սեպտ. 12 թուականաւ «Թայմզ» քաղաքացիական մը կը հաստատէ ձերբակալութեանց այն լուրը զոր մեր այսօրուան Պոլսոյ թղթակիցը հաղորդած էր արդէն :

«Հայկական մեծ ցոյցէ մը կը վախցուի, կը գրէ «Թայմզ», յառաջիկայ օրերէ սեպտ. 10/23ին : Իրատեսակով թիւները ձեռք առնուած են : Ձիւղերը զորքերը զինչերնքը պիտի հսկեն շարունակ երէկ գիշեր լրտեսները բերայի մէջ հայու մը տունը խուզարկելով վեց մարդիկ ձերբակալեցին և խել մը թուղթեր գրաւեցին : Ալիքսան Կարապետեան անուն հնչակեանը կը կարծուի թէ Պոլիս եկած է, բայց ոստիկանութիւնը մինչեւ հիմա տնոր պահուած անցը չէ գտած » :

— Փրանքօրթէր Ձայթունկի տուած լուրին համաձայն Սուլթանը Պոլսոյ ոստիկանապետ Փախի փաշան պաշտօնանկ ըրած է, որովհետեւ չէ կրցած իմանալ ու արգիլել երիտասարդ թուրքերուն դեպքաններուն մատուցած յեշտակագիրը, և որովհետեւ առանց ոստիկանութեան օգնութեան ու տեղեկութեան հայու մը քովէն մեծաքա-

նակ տիրամիտներ գտնուել է : — Վանի Բրիտանական փոխհիւպատոսը կը տեղեկացնէ թէ, վերջերս իր վրայ յարձակող աւազակներու զխաւորները ձերբակալուած և Վան բերուած են : Թուրք զինուորները քիւրտերու հետապնդումը շարունակած են բաւական տեղ հեռաւորութեամբ նստ մը քիւրտ սպաննուած են :

— Խնայողական սնուուկէն մեծ գումար մը անհետանալուն պատճառաւ մեծ իրարանցում տեղի ունեցած է Պոլսոյ մէջ : Կը կարծուի թէ այս գումարը պալատը իւրացուցած է իշխանուհի Ջէքիէ հանըմի որդւոյն Պիւրհանէ, տին էֆէնտիի ամուսնական ծախքին համար :

— Հրամանատար Մէհմէտ Ալի փաշան Սուլթանին վիրատորանք պատճառով է Կարմիր Խաչի բնկերութեան վերակազմուելուն համար ըրած առաջարկութեամբը, որուն ինքը յամանակ մը նախագահ եղած էր : Մէհմէտ Ալի փաշա Աէրապէրի գումար բանտարկուած է Սուրիա արտուելու համար, Դեմասկոս-Մէքքէի երկաթուղւոյն շինութեան հսկող-քննիչի պաշտօնով :

Ռ Ո Ւ Մ Մ Ս Ս Ս Ս

Պուրբէշեան թերթերու ըսածին նայելով Պոլկար և Ռուսան վէճը ոչ թէ համաձայնութեամբ կարգադրուած է, այլ թաղուած է ժամանակի մը համար, կայուն ճահիճի պէս, ինչպէս կըսեն գերմանացիները : Մակեդոնիոյ մէջ փոխադարձ ազդեցութիւն ձեռք բերելու խուլ կռիւը կը շարունակուի դարձեալ, և ուսմէնները աւելի կը նախընտրեն թուրքերու քան պուլկարներու իշխանութեան տակ մնալ :

— Պուրբէշեան հեռագիր մը կըսէ թէ Ռուսանիոյ նախարարապետ Գարբ, յայտարարել է թէ Պոլկարիոյ և Ռուսանիոյ մէջ վէճի ոչ մէկ իրական շարժում չկայ, և ոչ ալ զինուորական պատրաստութիւններ արձանուած են : Ռուսանիա ուղեց լոկ Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրել պուլկարներուն Մակեդոնիոյ մէջ կատարած յեղափոխական փրօփականտայի համար :

Չ Ի Ն Ս Ս Ս Ս

Շինկ իշխանը սեպտ. 3էն ի վեր Բէքին կը գտնուի և խոզաղութեան բանակցութիւնները սկսած են արդէն : Ուսումնասիրութեան առարկայ եղբր են հետեւեալ խնդիրները . 1. Թիէն-Ձինը չեղօք պիտի ճանչցուի, 2. Տէրութիւնները պիտի կարողանան պահակ զուրքեր պահել որպէս նաւահանգիստներու մէջ ի հարկին օտարահպատակները պաշտպանելու համար, 3. Պօքուէրներու պետերը պիտի գլխաւորուին :

Բանակցութեան խնդրին յաջողութեամբ ընդունուելը կը վերագրուի մէկ կողմէն ձմրան մօտենալուն, որուն խտուածեան միջազգային զօրքերը պիտի չի կարողանան դիմաւալ, ինչպէս որ այժմ իսկ ծագած հիւանդութեան նշաններէն յայտնի կերեալ : Միւս կողմէ Անգլիոյ վատութեանը, որ իր բոլոր ուշը թրանսփալի վրայ կեդրոնացած ըլլալով, երբեք մտքէն իսկ չէր անցուցած Չինաստանի մէջ յեղափոխութեան մը պայթումը, ու հազիւ քանի մը հազար հնգ ինչ զօրք կարողացած էր զրկել, որոնք ցուրտին սասակութեանէն սկսած են նեղուիլ արդէն :

Բանակցութեանց մէջ զլխաւոր ձայնը պիտի ունենայ Ռուսիա, որ արդէն հանդիսաւորը գրաւած է, Գերմանիա որ կը ձգտի գրաւել և ձաբան, որ 22,000 զինուորներով պատկառելի ուժ մը կը ներկայացնէ : Ձաբանական զօրքերը վերջին դէպքերուն մէջ անանկ տոկոսներ թիւն մը և միանգամայն խելք ու ազմագիտութիւն ցոյց տուին, որ երբեք կարելի չէ անտեսել :

— Ռուսիա որոշել է իր դեսպանութիւնը Բէքինէն շնչել և միայն զինուորական հրամանատար մը թողուլ հոն : Միւս սէրութիւններն ալ յաւանականաբար նոյնը պիտի ընեն և Բէքինը յառաջիկայ ձմեռ գաշնակից պետութեանց քօնթիւն տակ պիտի մնայ :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Քրիկէրի մեկնումը երբէք Պօէրներու գործունէութիւնը չէ թուլցուցած, ընդհակառակը կռիւը աւելի բռնկած է : Լորտ Բոպէրթս որ դէպքերու ծանրութեան պատճառաւ ստիպուեցաւ Բէթթօրիան թողուլ, կարեւոր ընդհարումներու լուրեր կը հաղորդէ :

— Լոր. Մարքիզէն «Տէյլ Թէլէկրաֆ» կը հեռագրեն թէ, Քրիկէր տեղւոյն իշխանութիւններէն ձերբակալուած է Անգլ. հիւպատոսին պահանջքին վրայ : Հիւպատոսը բողոքած է ըսելով թէ, Քրիկէր Փորթուկալի հողին վրայ գտնուելով հանդերձ կարգադրութիւններ կընէ Թրանսփալի մասին :

— Պլէմֆօնթայնէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Մաքտանուտ զօրավարը ամսոյս 13ին յաջողած է կասեցնել ընթացքը 800 պօէրներու որոնք ձեռքէն 33 սայլ, 270 կով, 68000 փամփուշտ և մեծ քանակութեամբ ազգամթերք առած է :

— Լորտ Բոպէրթս յայտարարութիւն մը հանած է, որով կը հրաւիրէ պօէրները որ ստպատակային կռիւներ մղելէ դադարին, քանի որ Քրիկէր նահազահը թողած է արդէն գահը :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ռուսանիոյ և Եգիպտոսի դեռ չը վճարող մեր բաժանորդներէն կը խնդրենք որ հաճին փութացնել իրենց բաժնեգրիները :

— Խարթում, Փա. Տէր. — Ձեր նշանակած հասցէին սկսած ենք արգէն թերթ զրկել : Գրամ կըրտաք ու շարկել ուղղակի մեր հասցէին սպասովադրեալ նամակով, «վալէօն տէքլառէն» ընելով :

— Առաքել Վարդիկեան, Գլխ. ցի. — Խմբագրութեանս քով նամակ մը ունիք :

Վ Ր Ի Պ Ա Կ

Նախորդ թիւին լուրերուն բաժնին մէջ սխալմամբ սպառած Պօթայի զլխատուժ պէտք է կարգալ Պօթայի մօտաւորտ սնձնատուր ըլլալը :

— 257 թիւին բանասիրականին վերջը «Երջանկութիւնով» պէտք է ըլլայ «Իրական կեանքով» :

ՉՈՒԱՐԱՆ ԿՈՒԹԷՆԳԷՐԿ

(Տպագրական տառերու)

Կարճր մետաղ . Ողիղ կարգ Հաշտար քարձորոքիւն

Ամէն լեզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ գներով Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Jgnatieff № 3, 10—25

ՀԱՅԿԱՎԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգաւոր յանձնարարներու, որ զպրոցական նոր շրջանին համար, ծանօթ ներդրանքներէ մանկավարժական լուրովին նոր գրութիւններով պատրաստուած զպրոցական գրքեր բերել տուած եմ : Մեծաքանակ գնումներու գոհացուցիչ զեղջիկ և յանձնարարութիւն անգործագրելի են անպատասխան կը մնայ եթէ կանխիկ դրամով ապստարած չըլլայ :

Գրատանս հետ հաշիւ ունեցողներ կը խնդրուի որ փութան ժամ առաջ կարգադրել :

Գնում եւ վճարում ամէն տեսակ նամակագրողներու :

Հասցէ՝ A. Zarbanélian Librairie Varna (Bulgarie)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութեան, հարսանեական հրատարակիչ, մահազգ :

Գրիները յոյժ դիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆՎՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԼԵՆԻԿ

Печатница Хр. П. Войниковъ — Варна